

Նունե Լիպարիտի Իսակյան

Ծնվել է 1970 թվականի մայիսի 22-ին ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում: Ամուսնացած է: Ունի երկու դուստր:

Կրթությունը

1976-78թթ. սովորել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1978-83թթ. սովորել է Կապանի թիվ 9 միջնակարգ դպրոցում:

1983-87թթ. սովորել է Կապանի թիվ 13 միջնակարգ դպրոցում:

1990 թվականին ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Էլեկտրատեխնիկական ֆակուլտետը: 1995 թվականին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը՝ ստանալով «ինժեներ-էլեկտրիկ» որակավորում:

Աշխատանքային գործունեությունը

1987-90թթ. աշխատել է Կապանի Սարքաշինական գործարանում, որպես հավաքող բանվորուհի:

1995-2002թթ. աշխատել է Կապանի «Սյունիք» ՍՊԸ-ում՝ որպես տնտեսագետ:

2002 թվականից աշխատում է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղում, նախ որպես Հիմնարար պատրաստականության առարկաների սեկտորի լաբորանտ (2002-04թթ.), հետո՝ ուսումնական մասի քարտուղար (2004-2005թթ.), ուսումնական գծով տեսուչ և համատեղությամբ՝ Մասնագիտական պատրաստականության դեպարտամենտի վարիչի տեղակալ (2005-2010թթ.):

2010-2012թթ. աշխատել է որպես մասնաճյուղի Ուսումնական մասի վարիչ:

2012 թվականից աշխատում է որպես մասնաճյուղի Կրթության որակի ապահովման և վերահսկման բաժնի պետ: